Խաչափայտին տեսակը միշտ գրական պիտառուութեանց նիւթ եղած է։ Այլ եւս ընկուզենիին խնդիր չըլլար, խաչն ինքն իսկ չինուած է երեք ծառի նիւթերէն, մայրի, նոճի և չօճի որ իրարու մօտ բուսնելով իրար միացած են։ Այս զրոյցը իրեն ծագում ունի Եսայիի (Կ. 13) համարը որ հետևեալ կերպով թարգմանուած է Ս. Գրոց հայերէն թարգմանութեան մէջ. «և փառքն Լիբանանու առ քեզ եկեսցեն, սաղարիւն և սօսիւ և նոճով և մայրիւ՝ առ հասարակ փառաւոր առնել զտեղի սրբութեան իմոյ, եւ զտեղի ոտից իմոց փառաւորեցից (P. P. V. A. հատ. II. էջ 233)։

3.— Խաչափայտին նիւթին տեսակը, ըստ Գրիգոր վրդ. Տաթեւացիի.— Գրիգոր վրդ. Տաթեւացին խաչի չորս մասերուն վրայ հետևեալ տեղեկութիւնը կուտայ. «վարդապետները կ'ըսեն թէ խաչին բունը կիպարի էր վերէն վար, խոտորնակը՝ արմաւենի թեւէ ի թեւ, և պատուանդանը նոճի և վերնագրին տախտակը՝ ձիթենի, այս տեղեկութիւններէն յետոյ խաչի բեւեռներու մասին կը գրէ թէ՝ ըստ ոմանց չորս են անոնք և անունները կը նշանակէ Ասուր, Թասուր, Գասուր եւ Սասնասուր։ Խաչին վրայ բովանդակ բեւեռները ինն են, բ. ոտից, բ. ձեռաց, ա. ուսին վրայ, ա. խաչին թևին վրայ, ա. Պիղատոսի տախտակին վրայ, բ. այն տախտակին վրայ՝ որ պատուանդան էր և ոտքը բեւեռուած (Տաբ. Հ. էջ 494–95)։

Մինչեւ ԺԻ. դար, Արևորդիք ալ կը հաւատային թէ Քրիստոսի խաչը բարտի ծառէն չինուած էր, գուցէ ատոր համար կը պաշտէին զայն (Ներ. Թ. էջ 225)։